ռուց. զկնի երկուց ժամուց, ելանք ճանապարհ դէպ ի վանքն Սաղիանու, որ հեռի է քաղաքէն երեք ժամաւ. զկնի 3 ժամու հասինք վանքն և գտինք հին յաջորդ կարնեցի Պօղոս վարդապետն, նոր յաջորդն Պետրոս վարդապետն Տէր Պօղոյսեան պայծառ կոչեցեալ[1]) և այլ ոչ սք. ամայի և անմարդաբնակ[2]), հին յաջորդն զկնի քանի աւուրց ել և գնաց դէպ Էջմիածին և նոր յաջորդն ըսկսաւ վարել զիւր գործն, զկնի քանի աւուրց եկին քաղաքի իշխանք տեսանել հաշիւ, հին յաջորդին, և յանձնել նոր յաջորդին։ Եւ մեզ ետուն 5 մամէթ ժամուց։ Յաջորդ Պետրոս վարդապետն գնաց թեմն պտղի ժողովել։ Եւ ես տեսի որ ձմեռն մերձեցաւ, մեր և սպասաւորաց սենեակն, յոյժ խախտեալ, նորոգել ետուս։ Աշխանայի գլուխն եւս խախտեալ՝ այն եւս նորոգել ետուս։ Պետրոս յաջորդն գնաց ի Բագու տէրունի[3]) արդուինք ժողովելու, մինչ որ դարձաւ մեզ եբեր ընծայ, մէկ գլուխ շաքար, մէկ ֆունտ չայ, մէկ գրվանքայ զաֆրան, մէկ զոյգ չուլքի, և երկու զոյգ ճերմակ ջօրապ։

Ի 1835 թիվ. նոր տարեգլխին, յաջորդ Պետրոս վարդապետն նոր տարի շնորհաւորէք ուղարկել էր մեզ. մէկ գլուխ շաքար և մէկ ֆունտ չայ. բերօղին ետուս մէկ պաճախլու ոսկի և ես ուղարկեցի սոյն յաջորդին, մէկ նոր ֆարաճայ կերպասեայ կապուտ խառայ և ծիրանի երեսով. զկնի Ծննդեանն շամախեցի ազա Պետրոսն եկն մեզ տեսութիւն և եբեր մեզի մէկ գլուխ շաքար և մէկ ֆունտ չայ։ Դանձակ գուղացի Տէր Դանիէլն[4]) եբեր մեզ մէկ գլուխ շաքար, և մեք առաք մէկ գլուխ շաքար զինն էր չորս մանէթ և կէս։

Ի 20 մարտի գիր ըստացայ, Կարբեցի Վեհէն ձեռամբ թվանկչի Յակոբին. համար 79. զոր գրէ այսպէս։

---

[1]) Ջաջորդաց ցանկն տես գրքիս 29 երես։

[2]) Այսպէս և ես գտի 1887 թուին Սաղիանու վանքն. և ամայի և անմարդաբնակ։

[3]) Տէրունի արդիւնքը պատկանում է Ս. Էջմիածնին։

[4]) Տէր Դանիէլն Յովհաննէս կաթուղիկոսի կնդակով կարգւում է կառավարիչ թեմին Շամախւոյ, որոյ որդին է Յովհաննէս բէկ Շահնշահեանց ի Նալեան։